

**ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի  
2018 թվականի ամփոփ հաշվետվություն**

2018 թվականի ընթացքում ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) իր գործունեությունն իրականացրել է հետևյալ ուղղություններով.

**1. Օրենսդրական դաշտի կատարելագործում**

2018 թ. ընթացքում մշակվել և ընդունվել են գիտության ոլորտին առնչվող իրավական ակտեր: Առավել կարևորներն են՝

➤ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ հաստատված Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները, ինչպես նաև՝ նշանակալի նվաճումների ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը:

➤ «Հայաստանի ազգային հերոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակ հիմնելու, մրցանակի հայցողների ներկայացրած աշխատանքների փորձաքննության անցկացման և մրցանակի թեկնածուի ընտրության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

➤ ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 797-Ն որոշմամբ հաստատված ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի ու ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի 2019-2021 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտը :

➤ ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի N 1023-Լ որոշմամբ հաստատված 2019 թվականին իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերը:

Կոմիտեն, հանդիսանալով գիտության ոլորտում պետական քաղաքականության պատասխանատուն, ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում ներառված գիտության ոլորտին վերաբերող միջոցառումների կատարումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով ձևավորել է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային և պետական նպատակային ծրագրերի նախագծերը քննարկելու հանձնաժողով, ինչպես նաև՝ Գիտական

կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը մշակելու աշխատանքային խումբ՝

Բացի այդ, 2018 թ. սեպտեմբերից սկսած յուրաքանչյուր ամսվա առաջին ուրբաթ օրը, ժամը 15:00-18:00-ը Կոմիտեում կազմակերպվում են գիտությանը վերաբերող հարցերի քննարկման մշտական հարթակի հանդիպումներ: Արդեն իսկ անցկացվել են 3 հանդիպում- քննարկումներ:

## **2. ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի քարտուղարության վարում**

1) կազմակերպվել և անցկացվել են երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթի հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնող մասնագիտական փորձագիտական խորհրդի նիստեր,

2) կազմակերպվել և անցկացվել է ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի նիստ: Քննարկվել են հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով ներկայացված ծրագրերը,

3) կազմակերպվել և անցկացվել են ՀՀ ռազմարդյունաբերական համալիրի զարգացման համար երկակի նշանակության ծրագրերի արդյունքների կարևորությունը գնահատելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի նիստեր:

## **3. Գիտական ծրագրերի մրցույթների անցկացում**

**3.1** Ամփոփվել են 2017 թվականին հայտարարված մրցույթների արդյունքները՝

1) ՌԴ «Գիտության և տեխնիկայի ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացմանն աջակցության հիմնադրամի» կողմից անցկացվող կիրառական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ - 2017» միջազգային մրցույթ՝ 9 հայտ, ֆինանսավորվել է 3-ը:

2) Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2018» միջազգային մրցույթ՝ 148 հայտ, ֆինանսավորվել է 39-ը:

3) Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիայի հետ համատեղ անցկացված գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթ՝ 15 հայտ, ֆինանսավորվել է 1-ը:

4) Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթ՝ 229 հայտ, ֆինանսավորվել է 102-ը:

5) «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2018» մրցույթ՝ 13 հայտ, ֆինանսավորվել է 6-ը:

6) «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների մրցույթ - 2018՝ 417 հայտ, ֆինանսավորվել է 182-ը:

**3.2** հայտարարվել և կազմակերպվել է գիտական ծրագրերի ֆինանսավորման 7 մրցույթ, որից 3-ը՝ միջազգային:

1) Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթ՝ 68 հայտ, ֆինանսավորվել է 23-ը:

2) «Արցախի հետ համագործակցության ծրագիր-2018» մրցույթ՝ 12 հայտ, ֆինանսավորվել է 7-ը:

3) «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2018» մրցույթ՝ 60 հայտ, ֆինանսավորվել է 36-ը:

4) Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի կողմից անցկացված կիրառական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2018» միջազգային մրցույթ՝ 18 հայտ, ֆինանսավորվել է 4-ը:

5) Երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթ՝ 12 հայտ, ֆինանսավորվել է 4-ը:

6) Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ՝ 13 հայտ, արդյունքներն ամփոփվում են: Այս տարի մասնավոր հատվածից և ոչ բյուջետային միջոցներից համաֆինանսավորման մասնաբաժինը կազմել է 35%:

7) Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2018» միջազգային մրցույթ՝ 42 հայտ, արդյունքներն ամփոփվում են:

8) «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2019» մրցույթ՝ հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2019 թ. հունվարի 31-ը:

#### **4. Գիտական փորձաքննության կազմակերպում**

4.1 Կազմակերպվել է 2017-2018 թթ. հայտարարված 13 մրցույթների հայտերի հավաքագրումը, տեխնիկական ու գիտաչափական վերլուծությունը, գիտական փորձաքննությունը, ամփոփվել են 11 մրցույթների արդյունքները:

4.2. Իրականացվել է նախկինում անցկացված մրցույթների գիտական թեմաների հաշվետվությունների գնահատումը:

4.3. Իրականացվել է գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու դիմումներում որպես նշանակալի ձեռքբերումներ ներկայացված նյութերի նույնակացումը և գիտաչափական գնահատումը:

4.4 Կոմիտեի գիտական փորձաքննության համակարգի միջոցով կազմակերպվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից 2018 թ. կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված 9 հայտերի գիտական փորձաքննությունը: Ստացված փորձագիտական եզրակացությունները փոխանցվել են ԼՂՀ:

#### **5. Ֆինանսավորում**

Կազմակերպվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի ֆինանսավորման գործընթացները: Ընդունվել և համակարգվել են 2017 թ. ընթացքում ֆինանսավորում ստացած բոլոր ծրագրերի ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունները.

##### **5.1 Բազային ֆինանսավորում տրամադրվել է՝**

1) «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի ենթածրագրերի շրջանակներում՝ 35 կազմակերպության 130 ծրագրի համար: Իրականացվել է գիտական կազմակերպությունների և բուհերի լաբորատորիաների/ ինստիտուտների գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորումը՝ ծրագրային հիմունքներով: Բացի դրանից ֆինանսավորվել են մի շարք ենթածրագրեր, այդ թվում՝

- «Գիտական միջոցառումների կազմակերպման աջակցություն» ենթածրագիր՝ 20 կազմակերպությունների՝ 24 գիտական միջոցառումների կազմակերպման համար:

- «Երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման աջակցություն» ենթածրագիր՝ 9 կազմակերպությունների՝ 10 երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար:

- «Համակարգի գիտական գործուղումների իրականացում» ենթածրագիր՝ 49 գիտաշխատողների՝ միջազգային գիտական միջոցառումներին մասնակցելու համար:

- «Գիտական հրատարակումների և գիտության մասսայականացման աջակցություն» ենթածրագիր՝ 3 կազմակերպությունների:

- «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում» ենթածրագիր՝ 2 կազմակերպությունների՝ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար:

- «Գիտական կենտրոնների ստեղծում և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրի իրականացում» ենթածրագիր՝ աջակցություն է տրամադրվել 1 կազմակերպության:

- «Միջազգային գիտական կառույցների անդամակցություն» ենթածրագիր՝ 2 կազմակերպության անդամակցության վճարի տրամադրում՝ (Հայդելբերգի Մաքս Պլանկի անվան միջուկային ֆիզիկայի ինստիտուտ (H.E.S.S. ծրագիր), Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ):

**2) «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն»** ծրագիր՝ 5 գիտական կազմակերպության 5 ծրագրի համար:

**5.2 Նպատակային-ծրագրային պետական ծրագրերի ֆինանսավորում տրամադրվել է 11 կազմակերպության 11 ծրագրի համար:**

**5.3 պայմանագրային (թեմատիկ) ծրագրերի ֆինանսավորման շրջանակներում շարունակվել են, ինչպես նաև նոր մրցույթների արդյունքներում նոր պայմանագրեր են կնքվել: Արդյունքում դեկտեմբերի դրությամբ ֆինանսավորում է տրամադրվել՝**

- թեմատիկ ծրագրեր՝ 52 կազմակերպություն, 182 գիտական թեմա:

- «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2018» մրցույթի շրջանակներում՝ 6 գիտական թեմա՝ 5 կազմակերպություն,

- Արցախի հետ համագործակցության շրջանակներում՝ 7 գիտական թեմա՝ 3 կազմակերպություն,

- «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվող 6 գիտական թեմա՝ 5 կազմակերպություն,

- Ասպիրանտների հետազոտությունների աջակցության 36 գիտական թեմա՝ 17 կազմակերպություն,

- Բարձր արդյունավետությամբ հատուկ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող լաբորատորիաներին աջակցության 3 գիտական ծրագիր՝ 3 կազմակերպություն,

- Երկակի նշանակության 4 գիտական ծրագիր՝ 4 կազմակերպություն,

- Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված 9 գիտական թեմա՝ 8 կազմակերպություն,

- Բարձր արդյունավետությամբ աշխատող 125 գիտաշխատողներ, այդ թվում՝ մինչև 35 տարեկան:

**5.4 «Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ» ծրագրի** շրջանակներում հավելավճարներ են տրվել 610 գիտությունների դոկտորի և 1548 գիտությունների թեկնածուի (տվյալները 2018 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ են):

## **6. Գիտական կազմակերպությունների անձնագրավորման արդյունքների վերլուծություն**

1. ՀՀ գիտական կազմակերպությունների անձնագրավորումն առցանց իրականացնելու նպատակով լրամշակվել է «ՀՀ գիտական կազմակերպության անձնագրի» ձևաթուղթը, ինչպես նաև կատարվել են 2015-2016 թվականների անձնագրավորման տվյալների համապատասխան վերլուծություններ:

2. Իրականացվել է 2017 թվականի ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող, գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող 82 գիտական կազմակերպությունների աշխատակիցների վերաբերյալ տվյալների հավաքագրում և մշակում, ստեղծվել է համապատասխան շտեմարան: Նշված շտեմարանը պարունակում է 6185 գիտական և վարչական աշխատողների մասին տվյալներ՝ գերատեսչությունը, անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, անձնագրի սերիան և համարը,

գիտական աստիճանը, պաշտոնը, համատեղությունների մասին տվյալները և այլն: Ըստ շտեմարանի, կատարվել են համապատասխան վերլուծական աշխատանքներ:

3. Թարմացվել է ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների շտեմարանը, որը 2018 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ պարունակում է 610 դոկտորի և 1548 թեկնածուի մասին տվյալներ:

4. Իրականացվել են տվյալների հավաքագրում, մշակում և համապատասխան վերլուծական աշխատանքներ՝ ՀՀ հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թթ. ռազմավարական ծրագրի ընթացքի և ՀՀ գիտության և տեխնիկայի զարգացման 2015-2019 թթ. գերակայությունների շրջանակներում իրականացվող հետազոտությունների վերաբերյալ:

## **7. Համագործակցություն**

### **7.1. Գիտական համագործակցության պայմանագրեր/ հուշագրեր**

- 2018 թվականի հուլիսի 31-ին Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի հետ կնքվել է Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին մտադրությունների հուշագիր, որի նպատակն է զարգացնել և ամրապնդել գիտնականների և գիտահետազոտական խմբերի միջև գիտական համագործակցությունը, ապահովել սարքավորումների համատեղ օգտագործումը, խրախուսել գիտական տվյալների և տեղեկատվության փոխանակումը, գիտական անձնակազմերի փոխանակումը և փոխադարձաբար աջակցել հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացմանը: Այժմ մշակման փուլում է գործնական ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է 2019 թվականին անցկացնել համատեղ նախագծերի աջակցության առաջին մրցույթը:

- 2018 թվականի հունվարի 16-ին վերստորագրվել է ՀՀ-ում Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հայկական տարածաշրջանային բաժանմունքի տեղակայման պայմանների մասին համաձայնագիր:

- 2018 թվականի նոյեմբերի 12-ին ստորագրվել է Քլարիվեյթ Անալիթիքս (Clarivate Analytics)՝ կազմակերպության հետ պայմանագիր, ինչը հնարավորություն է տալիս գիտական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվող հայաստանյան կազմակերպություններին օգտվել համակարգի ռեսուրսներից:

## **7.2 Կարևոր միջոցառումներ՝**

- Բաց դռների օր ՔԵՆԴԼ-ում՝ ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեն «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտը համատեղ կազմակերպել էին բաց դռների օր, որին ներկա էր ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը: Առաջին անգամ հանրության բոլոր շերտերի համար բաց էին «ՔԵՆԴԼ» ինստիտուտի ռադիոֆիզիկայի, լազերային տեխնիկայի, մագնիսական չափումների, գերբարձր վակուումային տեխնիկայի, դիֆուզիոն եռակցման և զոդման, նորագույն նյութերի և միկրոսարքերի, փորձարարական կենսաբանության հետազոտական լաբորատորիաները:

- Բանակցություններ Ռոդ Էնդ Շվարց (Rohde & Schwarz Int. GmbH-ի) գերմանական կազմակերպության, Համբուրգի համալսարանի և Դեզի կենտրոնի պատվիրակության հետ՝ Քենդլ ինստիտուտի հետ համագործակցության շրջանակներում նոր կրթական փոխանակման ծրագիր իրականացնելու շուրջ: Ծրագիրը նպատակ ունի խթանել կրթություն-գիտություն կապը և իրականացվում է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ու Համբուրգի կրթության նախարարության աջակցությամբ:

- Հանդիպում կոմիտեում՝ «Հորիզոն 2020-ի» «ERA Chairs&Twinning» ծրագրերի վերաբերյալ. ներկայացվեցին հայտերի տեխնիկական մանրամասներ, լավագույն ծրագրերը վերջնական տեսքի բերելու համար տրվող աջակցության հնարավորություններ: Հանդիպումը կազմակերպվել էր Գիտության կոմիտեի, Գիտական ծրագրերի ինտեգրման աջակցման կենտրոն հիմնադրամի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից:

**- 7.3 Շարունակվել են հայ-ֆրանսիական, հայ-գերմանական, հայ-իտալական, հայ-ռուսական, հայ-բելառուսական համատեղ ծրագրերը:**

Հաշվի առնելով արդեն անցկացված և բավական լավ արդյունքներ գրանցած մրցույթների տվյալները՝ այս տարի արդեն Գիտության կոմիտեն Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի հետ համատեղ առաջին անգամ հայտարարեց կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցույթ՝ բնական գիտություններ, ճարտարագիտություն և տեխնոլոգիա բնագավառներին համապատասխանող նախագծերի համար:

**7.4** Շարունակվել է համագործակցությունը Եվրոպական Միության կառույցների, այդ թվում՝ Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության հետ՝ «Հորիզոն-2020՝ հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրի շրջանակներում:



## **7.5 Կարևոր այցելություններ**

Կոմիտեի նախագահի ղեկավարած պատվիրակությունը տարվա ընթացքում մասնակցել է՝

- «ՄՀՄԻ - նոր դարաշրջանի 25 տարին» խորագրով միջազգային գիտաժողովին, որին հրավիրված էին ՄՀՄԻ անդամ-պետությունների գիտության, կրթության, ինովացիոն ոլորտի նախարարներ, կառավարությունների լիազոր ներկայացուցիչներ, դեսպաններ և այլ պատվավոր հյուրեր միջազգային գիտական համայնքից:

- Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի Գլոբալ հետազոտական խորհրդի (ГИС) կազմում ընդգրկված ազգային գիտական կազմակերպությունների ամենամյա հանդիպման շրջանակներում ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի և հիմնադրամի միջև համագործակցության 10-ամյակին նվիրված հանդիպմանը:

- ԱՄՆ Նյու Մեքսիկո նահանգում գտնվող Լոս Ալամոսի ազգային լաբորատորիա այցի ընթացքում բազմաթիվ հանդիպումների, որոնց ընթացքում քննարկվել են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և Հայկական ատոմային էլեկտրակայանի Միջուկային և ռադիոակտիվ նյութերի տեխնիկական և քրեագիտական փորձաքննության համատեղ լաբորատորիայի հետ կապված համագործակցության հարցեր:

## **8. Կոմիտեի ընթացիկ գործունեությունը**

2018 թվականի ընթացքում Կոմիտե է մուտքագրվել 4123 գրություն, որից՝ 45 քաղաքացիներից ստացած դիմում, 900 մրցույթի հայտ, 430 ֆինանսավորման հայտ, 400 հաշվետվություն: Առաքվել է 350 գրություն:

Գրանցվել են Կոմիտեի նախագահի և գլխավոր քարտուղարի համապատասխանաբար՝ 58 և 5 հրամաններ, 7 հանձնարարական:

Կոմիտեն արձագանքել է գիտության ոլորտին վերաբերող հրապարակումներին (հաշվառվել է Գիտության կոմիտեի գործունեությանն առնչվող մամուլում հրապարակված 130 հրապարակում, որից՝ 14 տեսանյութ և ռադիոնյութ), հանդես է եկել հոդվածներով, լուսաբանել իր գործունեությունը, տվել պարզաբանումներ: Կազմակերպվել է կոմիտեի նախագահի մամուլի ասուլիս, որի արդյունքում զանգվածային լրատվամիջոցներով հրապարակվել է առնվազն 24 նյութ:

Կոմիտեի 10-ամյա գործունեության վերաբերյալ հավաքագրվել և տպագրության է հանձնվել «10 տարի. հրապարակումներ և իրավական ակտեր» ժողովածուի նյութերը:

Կոմիտեի կայքը գործում է ակտիվորեն և արդյունավետ: Այն հնարավորություն է տալիս ծանոթանալ կոմիտեի գործունեությանը, հետևել հայտարարվող մրցույթներին և դրանց արդյունքներին, բաժանորդագրվել և ստանալ տեղեկատվություն կոմիտեի գործունեության մասին, ինչպես նաև առցանց մասնակցել կոմիտեի կողմից հայտարարվող մրցույթներին և ներկայացնել հաշվետվություններ:

Կայքն ունի 418 բաժանորդ: Կոմիտեն ունի նաև յուրօրյան ակիբ: